
**ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄԱՑՈՒՄԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆԿՈՂ ԱՆԿԱՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(սինեթրգետիկ մոտեցում)**

ՏԱՐՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ

Անցումային և անկայուն պետականությունը սինեթրգետիկական տեսանկյունից բիֆուրկացիոն¹ շրջանում գտնվող հասարակական համակարգի քաղաքական իշխանության հնարավոր դրսևորումների և դրանցով հնարավոր կարգի հաստատման գործընթացների ամբողջությունն է: Այդ ամբողջության մեջ չափազանց կարևոր է, թե «պատահականությունների» շղթայի մեջ, որոնք անկայունության և ոչ գծայնության բնութագրական հատկություններն են, քաղաքական իշխանության ինչպիսի կրողը հնարավորություն ունի կատարելու ընտրություն և բիֆուրկացիոն շրջանում պայմանավորելու հնարավոր ատտրակտորներից (զարգացման նպատակներից) ցանկալիի կամ, եթե ոչ ցանկալիի, ապա համակարգի համար գոնե ոչ այնքան ցավալիի կենսագործումը: Սրա համար էական նշանակություն ունի պետական իշխանության լեգիտիմության հիմնահարցի պարզաբանումը և անցումային փուլում անկայուն համակարգերի համար դրա դրսևորման լավագույն տարբերակի գիտակցումը:

Պետական իշխանության լեգիտիմության խնդիրը հասարակության զարգացման բոլոր փուլերում չի կորցնում իր արդիականությունը: Այն արդիական է նաև հիմա՝ հայաստանյան իրականությունում: Անցումային շրջանում գտնվող հասարակություններին հատուկ է ժողովրդի կողմից պետական իշխանության նկատմամբ անվստահությունը, որն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Նախքան անցումային և անկայուն հասարակական համակարգերում պետական իշխանության լեգիտիմացման ամենաարդյունավետ ձևի նկարագրմանն անդրադառնալը, նախ հասկանանք, թե ինչ է իրենից ներկայացնում լեգիտիմացումը և ինչպիսին կարող է լինել այն:

¹ «Բիֆուրկացիան» մաթեմատիկական բնորոշմամբ նշանակում է ոչ գծային դիֆերենցիալ հավասարման որոշումների ճյուղավորում: Բիֆուրկացիան ֆիզիկական իմաստով կետ է՝ բաց ոչ գծային համակարգի էվոլյուցիայի ուղիների ճյուղավորման կետ: Դրա կարևորությունն այն է, որ նման կետերում գործընթացների կանխորոշվածությունը դրսևորվում է ոչ միայն և ոչ այնքան անցյալով, որքան ապագայով, որն էլ կապված է կառուցվածք-ատտրակտորների պատկերացման հետ (այսինքն՝ ֆազային տարածությունում համակարգի կայուն վիճակի հետ): Եթե տարածական հարթության վրա պատկերենք հասարակության զարգացման հնարավոր ուղղությունները իրենց ճյուղավորումներով, այսինքն՝ ժամանակին տանք տարածական տեսք, ապա կստացվի ոչ այլ ինչ, քան ծառի պատկեր, որի ճյուղամասերը բիֆուրկացիոն կետերն են, որտեղ անկանխատեսելի վարքագիծ դրսևորող համակարգերը հնարավոր տարբերակներից ընտրում են այն, ինչն ավելի մոտ է իր ատտրակտորին՝ զարգացման «նպատակին»:

Ա. Լեզհիտիմություն (իրավահեղինակայնացում): Գիտության մեջ առկա են Լեզհիտիմության բազմազան բնորոշումներ: Իրավունքի փիլիսոփայությունում ժողովրդական զանգվածների կողմից ընդունվող և վերջիններիս՝ ենթարկվելու կամավոր համաձայնության վրա հենվող իշխանությունը կոչվում է Լեզհիտիմ իշխանություն²: Բնակչությունը նման Լեզհիտիմ իշխանությունը համարում է արդարացի և օրինաչափ: Եվ հակառակը՝ եթե ղեկավարող խումբը չի վայելում հասարակական վստահություն և ստիպված է անընդհատ դիմել հարկադրանքի միջոցների, նաև բռնության, ապա նման իշխանությունը ոչ Լեզհիտիմ է:

Ինքնին պետական իշխանության Լեզհիտիմացման գործընթացը համալիր երևույթ է, որն ավելի է բարդանում անկայունության փուլ մտած անցումային հասարակություններում: Այն ավելի համալիր է դառնում անցումային փուլ մտած անկայուն հասարակական համակարգերի համար, որոնք դրսևորում են ոչ գծային զարգացումներ: Համակարգային մոտեցում ցուցաբերելիս Լեզհիտիմությունը արտահայտվում է նրանով, որ հասարակությունը հավատում և հանդիման է, թե հասարակական կառուցվածքը համակարգելու, նրա զարգացման ուղղությունները որոշելու, ցանկալի և (կամ) անհրաժեշտ կարգը հաստատելու և ընդհանրապես՝ համակարգային գործընթացներն ուղղորդելու կամ դրանց վրա ազդեցություն ունենալու ընտրության ազատությունն իրականացնում է պատշաճ ուժը:

Անկայուն հասարակական համակարգերում, որտեղ սոցիալական և իրավական կարգերը դեռևս հաստատված չեն, ներհամակարգային հարաբերությունների ամբողջությունում առկա չեն կանոնակարգվածություն և աստիճանակարգություն, ուստի աննշան ազդակները ունենում են զգալի հետևանքներ: Սա հիմնականում դրսևորվում է համակարգի տարրերի փոխկապվածության հետերարխիկ կառուցվածքի շնորհիվ: Հետևաբար, դրա առանձնահատկություններն ընտրության ազատության պատվիրակման՝ իշխանության Լեզհիտիմացման ոլորտում, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև սիներգետիկայի հետերարխիկ սկզբունքով: Իսկ հետերարխիկ հետազոտությունները կարող են ունենալ բազմաթիվ դրսևորումներ: Մեզ համար կարևորություն են ներկայացնում դրա երեք ոլորտները՝ «նստվածքի հետերարխիա»³, «իշխանության հետերարխիա»⁴ և «արժեքների հետերարխիա»⁵:

Հասարակության և պետության հետ կապված՝ *նստվածքի* հետերարխիան հիմնականում կապվում է մարդու, ինչպես նաև մարդկանց խմբի հոգեկան աշխարհի հետ, ինչն արտահայտվում է տվյալ համակարգերի վերաբերյալ պատմության ընթացքում հավաքված կամ ենպիրիկ փորձով ձեռք բերված տեղեկատվության միջոցով ձևավորված դրանց ներքին կա-

² Տե՛ս **Даниелян О. Г.** Философия права. М., 2005, էջ 302:

³ Մանրամասն տե՛ս **Marquardt William H., and Carol L. Crumley**, Theoretical issues in the analysis of spatial patterning, in *Regional Dynamics: Burgundian Landscapes in Historical Perspective*, C. L. Crumley & W. H. Marquardt, eds. New York, Academic Press, 1987, էջ 1-18:

⁴ Մանրամասն տե՛ս **Carol L. Crumley**, Celtic settlement before the conquest: the dialects of landscape and power, in *Regional Dynamics: Burgundian Landscapes in Historical Perspective*, C. L. Crumley & W. H. Marquardt, eds. New York, Academic Press, 1987, էջ 403-429:

⁵ Մանրամասն տե՛ս **McCulloch Warren S.**, A Hierarchy of values determined by topology of neural nets. *Bulletin of Mathematical Biophysics*, 1945, 7:89-93:

ռավարման և կազմակերպման հարաբերություններում: Շատ հասարակություններում, այդ թվում՝ հայկական իրականությունում, նստվածքային հետերարխիան պայմանավորում է բացասական վերաբերմունքն ավանդական լեգիտիմացման նկատմամբ՝ հաշվի առնելով պատմության ընթացքում կուտակած էմպիրիկ փորձը՝ օտար իշխանությունների հեղինակությանը հակադրվելու ոլորտում, և դրանից բխող բացասական վերաբերմունքը իշխանության անփոփոխ կրողների նկատմամբ:

Իշխանական հարաբերությունները համալիր հասարակական համակարգերում չափազանց բարդ են, իսկ համալիր հասարակական համակարգերում իշխանության հետերարխիկ հարաբերությունները՝ առավել ևս: Անհրաժեշտ է մանրամասն հետազոտել ինչպես այն պայմանները, որոնց առկայության դեպքում տեղի են ունենում իշխանության ձևափոխումներ, այնպես էլ այն պայմանները, որոնց դեպքում իշխանության զանազան ձևավորումներ կազմում են կայուն կամ անկայուն միավորումներ: Նման հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես են կառավարման որոշակի ձևեր փոխկապակցվում միջավայրի կայունության կամ անկայունության մասնավոր պատմությունների և դրսևորումների հետ:

Իշխանական հարաբերությունները հիմնվում են արժեքների համակարգերի վրա, որոնք դասակարգվում և վերադասակարգվում են՝ կախված անհատների, խմբերի և կազմակերպությունների համար դրանց կարևորության աստիճանից: Հետազոտելով իշխանական հարաբերությունների ընթացքում ընդունված և բիֆուրկացիոն կետի համար կարևոր որոշումների հետևանքները՝ կարելի է նկատել, որ արժեքների հիերարխիան պահպանվել է որոշակի սոցիալական, տարածական կամ ժամանակային մակարդակում և մերժվել ու խախտվել է ուրիշներում: Այլ կերպ ասած՝ այնքանով, որքանով յուրաքանչյուր որոշում վերաբերում է այլ կարծիքի, այն նյութ է տրամադրում հետագա փոփոխության համար⁶: Պետական իշխանության լեգիտիմությունը ուսումնասիրելիս և հատկապես՝ լեգիտիմացման ձևերի ընտրության հարցում անչափ կարևոր է հաշվի առնել վերը նշված հետերարխիաները՝ ելնելով լեգիտիմացման կառուցակարգում առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններից:

Պետական իշխանության լեգիտիմացման կառուցակարգում կարևոր տեղ են զբաղեցնում այն պայմանները, որոնք զգալի ազդեցություն են ունենում պետական իշխանության սոցիալական ճանաչման գործընթացի վրա և թույլ են տալիս լեգիտիմացման կոնկրետ օբյեկտը բնութագրել ոչ միայն որպես պետական իշխանության հնարավոր կրող, այլ նաև՝ որպես հասարակության համար ցանկալի: Ենթադրվում է, որ որպես նման պայման նախ և առաջ հանդես է գալիս պետական իշխանության կրողի՝ իշխանական գործառույթների արդյունավետ իրականացման ռեալ հնարավորությունը⁷: Պակաս կարևոր չեն հասարակությունում առկա պայմանե-

⁶ Մանրամասն տե՛ս **Carole L. Crumley**, *Heterarchy and Analysis of Complex Societies*, University of North Carolina at Chapel Hill, [http://www.triquete.org/documents/Heterarchy AnalysisComplexSoc.pdf](http://www.triquete.org/documents/Heterarchy%20AnalysisComplexSoc.pdf)

⁷ Տե՛ս **Оль П. А., Ромашов Р. А., Тищенко А. Г., Шукшина Е. Г.** Государство, общество, личность. М., 2005, էջ 230:

րը, գործոնները, որոնք էական ազդեցություն են ունենում իշխանության լեգիտիմացման գործընթացի վրա և թելադրում են, թե կոնկրետ ժամանակային հարթության վրա պետական իշխանության լեգիտիմացման որ ձևն է ավելի արդյունավետ և հասարակական պահանջի կրող: Իսկ լեգիտիմացման հիմքերի մասին խոսելիս սովորաբար առանձնացվում է երկու խումբ՝ իռացիոնալ (ոչ բանական) և ռացիոնալ (բանական): Ռացիոնալ կամ ոչ ռացիոնալ տերմինները, ըստ Մաքս Վեբերի, մարդկային գիտակցված կամ չգիտակցված վարքագծի բնութագրեր են: Նա իր սոցիոլոգիան կառուցում է մարդու կամ մարդկանց խմբերի գործողության մաքուր, իդեալական չորս տեսակների վրա՝

ա) գործողությունը կարող է տրված նպատակի նկատմամբ ռացիոնալ, բանական ձևով կողմնորոշված լինել,

բ) գործողությունը կարող է բանական ձևով կողմնորոշված լինել բացարձակ որոշակի արժեքի նկատմամբ,

գ) գործողությունը կարող է կյանքի կոչված լինել «գործակալի» որոշակի կրքերով կամ զգացմունքային իրավիճակով,

դ) գործողությունը կարող է որոշվել ավանդույթներով և խոր արմատավորված սովորույթներով⁸:

Ինչպես ցույց են տալիս տարբեր երկրներում և պատմության տարբեր փուլերում գոյություն ունեցող քաղաքական-իրավական հարաբերությունների ուսումնասիրությունները, կան լեգիտիմացման զանազան հիմքեր: Լեգիտիմացման դասական դասակարգումը, որ ցայսօր չի կորցրել իր նշանակությունը, առաջադրել է Մ. Վեբերը: Դրանք են՝ ավանդական, ռացիոնալ-իրավական և խարիզմատիկ տեսակները:

Ավանդականից խարիզմատիկ իշխանությունը տարբերվում է մի շարք հատկանիշներով: Իշխանության օրինականության համար խարիզմատիկ առաջնորդին չի հետաքրքրում, թե ինչ է եղել առաջ: Նա չի դիմում քաղաքական վարքագծի ավանդական մեքենայացվածությանը, այլ ինչ-որ ձևով վերալիցքավորում է մարդկանց, ստիպում է նրանց հրաժարվել իշխանության ընկալման հին կանխադրույթներից: Նա հիմնվում է ազնիվ, զգայական հարաբերությունների վրա: Գրականության մեջ կա բավականին հիմնավորված մի տեսակետ, որ խարիզմատիկ առաջնորդը միշտ այս կամ այն չափով համարվում է «ժողովուրդների հայր»⁹: խարիզմատիկ հեղինակությունը վերականգնվում է ժամանակի յուրաքանչյուր պահի, և նրա օրինականությունը կորսվում է, երբ կորչում է առաջնորդի նկատմամբ հավատը: Լեգիտիմացման այս տեսակի գործընթացը որոշ տեսաբանների կարծիքով, ունի երեք ուղղություն, որոնք անմիջականորեն կապվում են առաջնորդի հետ: Դա առասպելական կերպարի (թեկուզ անգիտակցորեն) նմանակումն է, անհնարին թվացող խնդիրների լուծումը և անհատական հատկանիշները, որոնք նրա մասին ստեղծում են վերնարդկային պատկերացում¹⁰:

⁸ Տե՛ս Скирбекк Г. и Гилье Н. История философии. М., 2003, էջ 667: Կան նաև լեգիտիմացման գործընթացների և, որպես այդ ընթացակարգերի արդյունք, լեգիտիմության տեսակների մի շարք այլ դասակարգումներ:

⁹ Տե՛ս Оль П. А. и др., նշվ. աշխ., էջ 224:

¹⁰ Տե՛ս Ann Ruth Willner, The Spellbinders, Charismatic Political Leadership, Yale University Press, New Haven and London, 1984, էջ 128:

Բ. Արժեքային խարիզմատիկ լեզվատիմացում: Որպես կանոն՝ առաջնորդ է համարվում այն անհատը, ով այս կամ այն կերպ ձեռք է բերել հանրահայտություն և ճանաչվել որպես մարդկանց որոշակի խմբի ղեկավար: Բացի այդ, առաջնորդ են անվանում նաև այն մարդուն, ով այս կամ այն պատճառով համարվում է մարդկանց որոշակի խմբի, որոշակի սոցիալական համատեքստի, տնտեսության, քաղաքականության, գաղափարախոսության ոլորտում շարժման ղեկավար: Եթե 20-րդ դարի սկզբին «առաջնորդ» հասկացությունը վերաբերում էր ուժեղ, իշխող անձին, ապա այսօր դրա նշանակությունը ավելի է ընդլայնվել, թեպետ նախկինի պես ենթադրում է մեկ անհատի գերակայությունը մյուսի նկատմամբ: Առաջնորդը լավ է, թե վատը՝ որոշվում է հետագայում՝ կարծրատիպերի կամ ռացիոնալության տեսանկյունից¹¹:

Հենվելով մարդկային գործունեության և վարքագծի վերաբերյալ Մ. Վեբերի առաջարկած չորս տիպերի վրա՝ կարելի է առանձնացնել պետական իշխանության խարիզմատիկ լեզվատիմացման երկու տեսակ՝

ա) աֆֆեկտիվ կամ էմոցիոնալ գործունեության և վարքագծի հիման վրա իրականացվող խարիզմատիկ լեզվատիմացում, որը, որպես կանոն, հատուկ է տոտալիտար, բռնապետական ռեժիմներին (պետական իշխանության էմոցիոնալ խարիզմատիկ լեզվատիմացման սուբյեկտ հանդիսացող առաջնորդները, ձգտելով հաստատել և ամրապնդել իրենց իշխանությունը, դիմում են ոչ թե բանականությանը, այլ զգացմունքներին, հաճախ նաև՝ պարզունակ: Խարիզմատիկ լեզվատիմացման այս տեսակի դեպքում առաջնորդներն, օգտագործելով ցանկացած հարմար եղանակ, ամեն կերպ ձգտում են իրենց ենթակաների մեջ առաջացնել հոգեբան Կ. Յունգի հայտնաբերած արխետիպերի «արթնացում» և գիտակցականի «քննցում»: Շատ են այն դեպքերը, երբ բանական արժեք-նպատակին հասնելու համար օգտագործվում են մարդու բնական, հիմնական իրավունքները ոտնահարող, անմարդկային միջոցներ: Այս ամենը սահմանազատում են աֆֆեկտիվ խարիզմատիկ լեզվատիմացումը ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ լեզվատիմացումից),

բ) ռացիոնալ-արժեքային գործունեության (վարքագիծ, որը բանականորեն ուղղորդվում է որոշակի բացարձակ արժեքով և ուղղված է որոշակի բացարձակ արժեքի) հիման վրա իրականացվող խարիզմատիկ լեզվատիմացում, որը հատուկ է ժողովրդավարական երկրներին: Այլ կերպ սա անվանում են, այսպես կոչված, «առաջնորդական դեմոկրատիա»: Լեզվատիմացման այս տեսակը նույնպես, ինչպես մյուսները, կազմված է երկու սուբյեկտներից՝ իշխանության պոտենցիալ կրող սուբյեկտից, մեր դեպքում՝ խարիզմատիկ առաջնորդը, և իշխանությանը ենթակա սուբյեկտից, այսինքն՝ բնակչությունը: Պետք է ասել, որ ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ լեզվատիմացման դեպքում հասարակությունը պետք է բավականաչափ հասուն և զարգացած լինի: Այն, ինչպես ռացիոնալ-իրավական լեզվատիմացման դեպքում, պետք է քաղաքացիական հասարակության հաստատմանը ձգտող հասարակություն լինի՝ դրա բոլոր առանձնահատկություններով հանդերձ: Հասարակությունը թե՛ կենցաղային, թե՛ հասարակա-

¹¹ Տե՛ս Менегетти А. Психология лидера. М., 2004, էջ 37:

կան, թե՛ քաղաքական ոլորտներում չպետք է ղեկավարվի և առաջնորդվի սովորույթներով ու ավանդույթներով, այսպես ասած՝ «անցյալի անտեսանելի ձեռքով», չպետք է ղեկավարվի խարիզմատիկ բռնապետի կողմից հրահրվող «հոտային բնագոյով», այլ լեգիտիմացման այս տեսակի համար հասարակությունը պետք է առաջ գնա բանական, իրական պատկերացումներով, գիտակցականի հստակ դատողություններով: Այս ամենն ասելիս թվում է, թե նկարագրվում է ռացիոնալ-իրավական լեգիտիմացման սուբյեկտ հանդիսացող հասարակությունը: Սակայն այս հասարակությունը, ի տարբերություն վերը նշվածի, թեև ղեկավարվում է ռացիոնալությամբ, սակայն ինչ-ինչ պատճառներով, որոնք հիմնականում առաջանում են արժեքների արագ փոփոխություններից, կորցրել է իր վստահությունը և հավատը թե՛ երկրի պետական իշխանության և թե՛ նրա կողմից «քարոզվող» արժեքային համակարգի նկատմամբ: Այս հասարակության մեջ առկա է չկողմնորոշվածության երևույթը, դրա անդամները դադարում են աջակցություն հուսալ մինչ այդ վստահելի և համընդհանուր կամքը արտահայտող պետական իշխանությունից և սկսում են իրենց ամբողջ ուշադրությունը սևեռել անհատական, ընտանեկան, կլանային շահերի կյանքի կոչմանը, քանի որ այլևս գոյություն չունի ընդհանուր բարիքը, շահն ու կամքը, որովհետև դրանք արտահայտողն այլևս չկա:

Ժողովրդավարական երկրներում խարիզմատիկ առաջնորդի հատկանիշներով կարող է օժտված լինել միայն այն անձը, ով, բացի այն բանից, որ զբաղեցնում է երկրի գլխի կամ կառավարության ղեկավարի պաշտոնը կամ երկրի մեկ այլ գլխավոր պաշտոն, նաև այդ պաշտոնը ձեռք է բերել՝ հիմնվելով ժողովրդավարական սկզբունքների վրա: Այսինքն՝ այստեղ պետք է առկա լինի պետական իշխանության ռացիոնալ լեգիտիմացման միջոցներից մեկը՝ ժողովրդի կամքի արտահայտման օրինական և ռացիոնալ եղանակը: Դա կարող են լինել ընտրությունները, հալածող և հարստահարող իշխանության իշխանափոխությունը և այլն: Պետական իշխանության լեգիտիմացման այս տեսակը կազմված է նախորդ երկուսից՝ ռացիոնալ - իրավական և աֆֆեկտիվ խարիզմատիկ: Ռացիոնալ-իրավական լեգիտիմացումը վերաբերում է առաջնորդի գործունեությանը, այսինքն՝ նա իր գործունեության մեջ, գրեթե առանց բացառության, պետք է առաջնորդվի բանական պատկերացումներով և քաղաքական, տնտեսական, իրավական խնդիրների բանական լուծման չափանիշներով, այլպես կկորցնի բնակչության վստահությունը: Իսկ աֆֆեկտիվ խարիզմատիկ լեգիտիմացման այն հատկանիշները, որոնք վերաբերում են առաջնորդին, նրա անձին, պետք է կիրառելի լինեն նաև ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ լեգիտիմացման ժամանակ: Սակայն երկուսը չպետք է խանգարեն միմյանց, այլ փոխգործեն:

Խոսելով ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ լեգիտիմացման մասին, տեղին է հիշել Ա. Մենեգետտի «Առաջնորդն արժեքներ արարող է» միտքը, որ բնութագրական է առաջնորդների հենց այս տեսակին¹²:

Ընդհանրապես, առաջնորդությունը լինում է տարբեր դրսևորումներով. «Այն կարող է լինել կամ սիներգիկ, կամ էնտրոպիկ, կամ սինկրե-

¹² Տե՛ս Менегетти А., նշվ. աշխ., էջ 125:

տիկ»¹³: Անկայունությունից՝ քաոսից, հասարակական, պետական և իրավական կարգին անցնելու ժամանակ անհրաժեշտ է սիներգիկ առաջնորդ, ով ունակություն ունի վերածվելու բավարար սինկրետիկի, սակայն ոչ այնպիսի սինկրետիկ վեկտոր իրացնողի, որ համակարգում չափից դուրս ավելացնի հոմեոստազը: Սա համապատասխանում է այն առաջնորդի նկարագրին, որը հասարակական համակարգում նոր, առաջադիմական արժեքներ արարող է և դրանց պաշտպան, որը, սակայն, չի կործանում հասարակության կուտակած սոցիալական հիշողության արժեքավոր դրսևորումները, թեև որոշ քարացած կարծրատիպերի համար իրականացնում է էնտրոպիկ վեկտորի առաքելություն: Այսինքն՝ նման պարագայում համալիր համակարգի համար խարիզմատիկ առաջնորդության գործառույթը պարունակում է էներգետիկ երեք վեկտորները միաժամանակ:

Համակարգային տեղեկատվական դրական հետադարձ կապի առկայության պայմաններում, երբ անցյալը, պատմությունը մեծ ազդեցություն են թողնում կատարվող ընտրության վրա և շատ հաճախ՝ կաշկանդում այն, լեգիտիմացման այս ձևը զգայական հնարավոր շեղումներ առաջացնող տեղեկատվական հսկայական հոսքերի պայմաններում պահանջում է սառը դատողություն: Սոցիալական արագացող գործընթացների հետևանքով առաջացող սոցիալական ժամանակի ընթացքի արագացումը տեղի է ունենում սոցիալական համակարգի զարգացման անցումային փուլում, որում դրսևորվում են անկայունության երևույթը և ոչ գծային զարգացումները, այլ կերպ ասած՝ սա քաոսային այն ռեժիմն է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ համալիր համակարգում հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում չափազանց մեծաքանակ, բազմամակարդակ պայմանականությունների, փոխհարաբերությունների առկայություն: Ահա այս օբյեկտիվ և սուբյեկտիվ չկողմնորոշվածության պայմաններում պետական իշխանության կրողը, որը ի վիճակի է համակարգային ենթակառուցվածքներից և ընդհանրապես դրանց տարրերից «նվաճել» վստահություն և հավատ առ այն, որ ինքը «իրավունք» ունի իրականացնելու ընդհանուր համակարգի համար ընտրության ազատություն՝ իշխանություն, մեր կարծիքով, հենց արժեքներ ստեղծող խարիզմատիկ առաջնորդն է:

Պատահական չէ, որ քաղաքական խարիզմայի առաջացման բանաձևը պայմանականորեն սկսում է ձևավորվել ժայրահեղ սոցիալական սթրեսի կամ ճգնաժամի իրավիճակներից: Եվ եթե առկա քաղաքական իշխանությունները ցանկություն չեն ունենում կամ անկարող են լինում հաղթահարելու ճգնաժամը, ժողովուրդը օտարվում է քաղաքական համակարգից և հանձնվում է ճգնաժամից դուրս գալու խորհրդանիշ և միջոց դիտվող ուժեղ առաջնորդի քաղաքական բարեփոխումներին: Եվ հենց որ որևէ առաջնորդ կամ շարժում հանդես է գալիս ինչ-որ գաղափարով, որը որոշ հույս է ներշնչում, ժողովուրդը պատասխանում է նրան խարիզմատիկ կողմնորոշվածությամբ¹⁴: Այդ է պատճառը, որ եթե «հասարակությունը կամ երկիրը աղքատ է կարգով, ապա այն հարուստ է առաջնորդությամբ,

¹³ Пригожин А. И. Дезорганизация: Причины, виды, преодоление. М., 2007, с. 98.

¹⁴ Մանրամասն տես William H. Friendland, For a Sociological Concept of Charisma, Social Forces 43 (Oct. 1964), էջ 18-26:

քանի որ այն պետք է լրացնի կարգի անբավարարվածությունը»¹⁵: Սակայն այստեղ նույնպես խնդիր է առաջանում՝ արդյոք առաջնորդության բուլոր դրսևորումները կարող են համակարգը դուրս բերել ոչ գծային զարգացումների փուլից, իսկ այն առաջնորդները, որոնք համակարգային անկայունությունը զսպելու համար ունեն բավարար հնարավորություններ, կարող են հաստատել կարգ, ինչը համահունչ կլինի հասարակական համակարգի զարգացման արդի ներ - և արտահամակարգային գործընթացներին, թե՞ համակարգը կմնա կայուն հոմեոստազի մեջ: Եվ արդյոք հասարակական համակարգի ճգնաժամը միա՞կ պայմանն է խարիզմատիկ լեգիտիմացման համար, թե՞ դա անհրաժեշտ տարրերից մեկն է միայն:

Այստեղ անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել այն հիմնական տարրերը, որոնց առկայության պայմաններում կարող է առաջանալ քաղաքական խարիզմ և դրա միջոցով պետական իշխանության լեգիտիմացում: Այս հարցում, կարծում ենք, կարելի է համաձայնել Ա. Լ. Ուիլնների հետ, որն առաջարկում է հետևյալ տարրերը՝

1. ճգնաժամային իրավիճակ,
2. պոտենցիալ հետևորդներ՝ սթրեսը չհաղթահարողների շրջանակից,
3. առաջնորդության հավակնորդ,
4. փրկության (ազատության) գաղափարախոսություն¹⁶:

Այնուամենայնիվ, կա որոշ անհամաձայնություն այն հարցում, թե սրանցից որն է խարիզմատիկ լեգիտիմացման ուղղակի պատճառ: Որոշ հետազոտողներ շեշտը դնում են ճգնաժամի¹⁷, որոշները՝ հետևորդների հոգևոր վիճակի¹⁸, մյուսները՝ գաղափարախոսության կամ առաջնորդի սխրանքի վրա¹⁹: Սակայն, կարծում ենք, այդ տարրերից որևէ մեկին առավելություն տալու համար պետք է առաջնորդվել կոնկրետ հասարակության զարգացման կոնկրետ ժամանակահատվածի օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատկություններով, թեպետ, առանց դրանց բուլորի արժևորման անհնար կլինի ճիշտ հասկանալ համակարգային պատճառահետևանքային կապերը և ֆլուկտուացիաների ազդեցությունները անցումային համակարգերի ցանցային փոխկապվածության վրա, ինչպես նաև դրանց դերը հասարակական համակարգային զարգացման բիֆուրկացիանների շրջաններում՝ որպես զգայուն միջավայրում ընտրության վրա ազդելու պայմաններ:

Գ. Արժեքների դինամիկա և խարիզմատիկ առաջնորդ: Արդեն նշել ենք, որ հասարակության սովորական վիճակը կայուն նորմատիվության վիճակն է: Այդ վիճակում հասարակությունում ձևավորված է լինում կայուն արժեքային համակարգ, որը հասարակության անդամների վարքագծի ուղեցույց է: Հասարակության անդամների գերակշիռ մասն ընդունում է այդ

¹⁵ Пригожин А. И., նշվ. աշխ., էջ 97:

¹⁶ Տե՛ս Ann Ruth Willner, նշվ. աշխ., էջ 43:

¹⁷ Տե՛ս William H. Friendland, նշվ. աշխ.:

¹⁸ Տե՛ս James V. Downton, Jr., Rabel Leadership: Commitment and Charisma in the Revolutionary Process (New York: Free Press, 1973):

¹⁹ Տե՛ս Ratnam, Charisma and Political Leadership, մեջբերումն ըստ Willner A. R., նշվ. աշխ., էջ 329:

արժեքային համակարգը, ընդ որում՝ հասարակության տարբեր խմբերի, ինչպես նաև անհատի և հասարակության միջև արժեքային համակարգի ընդհանրության պատճառով առկա է միասնություն: Սակայն գալիս է մի պահ, երբ հասարակությունը սկսում է փոխակերպվել՝ էվոլյուցիոն կամ հեղափոխական ձևով: Այդ պահից սկսում է հասարակության անցումային ժամանակաշրջանը: Նախկին արժեքային համակարգը փլուզվում է, դրա փոխարեն սկսվում է ձևավորվել նորը: Սակայն այդ նորը դեռևս լիովին ձևավորված չի լինում, դեռևս վարքագծի ուղեցույց չէ հասարակության գերակշիռ մասի համար: Հասարակության անդամների մի մասը առաջնորդվում է նախկին արժեքային համակարգով, մյուս մասը՝ նոր ձևավորվողով, երրորդ մասը մնում է չկողմնորոշված: Հասարակությունում ստեղծվում է աննորմատիվ կամ անոմիայի վիճակ: Հասարակության տարբեր խմբերի, ինչպես նաև անհատի և հասարակության միջև կապերը թուլանում են, վերանում է միասնությունը, անհատը օտարվում է հասարակությունից:

Արժեքներ ստեղծող առաջնորդն իր իսկ ստեղծած արժեքներով դրական առումով դանդաղեցնում է հասարակական բացասական գործընթացների արագացումը և համակարգում ստեղծում է «հեմման կետեր», որոնք հասարակական զանգվածներին և համակարգային այլ ենթակառուցվածքներին համախմբվելու հիմք են դառնում:

Ժողովրդավարության արժեքները որպես սկզբունք հռչակած երկրները, որոնք գտնվում են անցումային շրջանում, բախվում են մի խնդրի հետ, որը կարելի է բնութագրել որպես հասարակական ընդհանուր խնդիրների նկատմամբ նիհիլիզմ, անտարբերություն: Պատճառն այն է, որ հասարակությանը դեռևս խորթ է նոր արժեքային համակարգը կամ եթե խորթ էլ չէ, ապա հասարակությունը հիասթափվել է այն կյանքի կոչողներից, կորցրել է պետական իշխանությունը կրող անձանց նկատմամբ իր վստահությունը՝ պարբերաբար ձախողումների, դիտավորյալ բացթողումների և այլ պատճառներով: Այլևս հասարակության անդամների համար գոյություն չի ունենում համընդհանուր կամքի՝ Հեգելի տերմինով ասած՝ «համընդհանուր, առաքինի և բարոյական ոգու, սուբստանցիոնալ կամքի անաչառ արտահայտիչը»²⁰: Դրա փոխարեն լինում է մեկ ուրիշը, որը գործում է կամ խորթ արժեքային համակարգի վրա հիմնվելով, կամ անաչառ չէ և չի կարողանում ու չի ցանկանում արտահայտել ընդհանուր կամքը: Այդ անվստահությունը լրացնելու են գալիս մարդկանց մեջ առաջացող անկարողության զգացումը, անլիարժեքության բարդույթը, տազնապայնությունը՝ սոցիալական, երբեմն՝ նաև կենսաբանական կարգավիճակի համար վախը և այլն: Սրան գումարվում են անցումային փուլի անկայուն հասարակական համակարգերի համար մեծ մասամբ պատահական գործընթացները, որոնք էլ ավելի են ապակողմնորոշում հասարակության անդամներին:

Նման անհատներից կազմված հասարակությունները, ասես, պահանջ են զգում այնպիսի անձի, ով կարող է «ջախջախել» անվստահելի, հալածող իշխանություններին և հաստատել կայուն արժեքային համակարգ, ինչու չէ՝ նաև ստեղծել նոր, առավել առաջադիմական արժեքներ,

²⁰ Гегель. Философия права. М., 2007, с. 319.

ով կարող է հաստատել մոռացված համընդհանուր կամքը, լինել դրա անաչառ արտահայտիչը, ով կարող է, կյանքի կոչելով այդ համընդհանուր կամքը, բավարարել հասարակության անդամների սոցիալ-հոգեբանական գրեթե բոլոր պահանջմունքները, ով կարող է նվիրել հասարակությանը հաղթանակ և պայքարի ու արարման նոր ուղի, ով կջանա ամենուր ստեղծել նորը, կատարյալը: Եվ այս ամենից հետո, շնորհիվ այդ առաջնորդի, կվերականգնվի կամ կհաստատվի հասարակության վստահությունը պետական իշխանության նկատմամբ, ու այդ պետական իշխանությունն, իրոք, կդառնա լեգիտիմ:

Սակայն համակարգի համար այդ անձը պարզապես առաջնորդ չի լինելու: Քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում անկայուն հասարակությունը, ինչպես ցույց է տալիս սիներգետիկան, դրսևորում է ոչ այնքան օրինաչափ, որքան պատահական զարգացումներ, իսկ «այն կոնկրետ քաղաքական գործչի մասին, ով ի վիճակի է երբեմն կանխատեսելու նման երևույթները, սեփական վարքագիծը հարմարեցնելու դրանց, կազմակերպելու համապատասխան քաղաքական միջոցառումներ, խոսում են որպես մի անձնավորության, ով տիրապետում է ինտուիցիային՝ բավականին արժեքավոր որակին: Այդ ինտուիցիան օգտագործելու ունակությունը քաղաքական առաջնորդին դարձնում է խարիզմատիկ առաջնորդ»²¹: Անկայուն համակարգը կայունության փուլ մտնելու համար կարիք ունի ներհամակարգային կառուցվածքային ամբողջության, իշխանության հետ ամուր կապի, ինչի համար համակարգը պահանջում է այնպիսի անձնավորություն, ով օժտված է մի շարք ոչ սովորական հատկանիշներով, որոնք կազմում են նրա խարիզմը, իսկ «խարիզմը ամենից հաճախ կապվում է պատահականության հետ»²²: Այդ անձը ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ լեգիտիմության մյուս սուբյեկտն է: Նա պետական իշխանության պոտենցիալ կրողն է, սակայն մինչ այդ նա պետք է, որպես ռացիոնալ-արժեքային խարիզմատիկ առաջնորդ, օժտված լինի որոշ հատկանիշներով:

Առաջնորդին ստեղծում է բարձրագույն ղեկավարող լինելու ունակությունը: Նա տարբերվում է մյուսներից ընդհանուր նպատակին հասնելու համար կոլեկտիվի գործունեության կոորդինացման փայլուն կարողությամբ: Առաջնորդն օժտված է բազմաթիվ պահանջմունքներ, կարողություններ ու միջոցներ ներառող գործունեությունը գործառութային միասնության բերելու կարողությամբ: Գործունեության նպատակը պատվիրվում է խմբի կամ սոցիալական բովանդակության կողմից, այսինքն՝ որոշվում կամ պայմանավորվում է այս կամ այն խմբի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Առաջնորդի գործառութայնությունը որոշվում է նպատակին հասնելու այն միջոցները գտնելու և կոորդինացնելու ունակությամբ, որոնց ամբողջությունը կարող է բավարարել սոցիալական խմբի հետաքրքրությունները:

Նման եզրակացության համար հիմք է ծառայում այն դրույթը, որ քաղաքական կյանքում խարիզմատիկ առաջնորդները «խաղում են ուրույն

²¹ Венгеров А. Б. Синергетика и политика // "Общественные науки и современность", 1993, № 4, с. 63.

²² Նույն տեղում, էջ 63:

ատտրակտորների՝ համակարգի այն անսպասելի մասերի դերը, որոնք իրենց շուրջ են հավաքում համակարգի կարևոր տարրերը, դրանց ներքաշում են շարժման՝ իշխանության պայքարի մեջ, ի հայտ են գալիս մի իրավիճակում, երբ այն վերափոխում են այլ վիճակների՝ համակարգին տալով անկայունության, անհավասարակշռության լրացուցիչ ազդակներ»²³, հնարավորություն ունեն համակարգի անկայունությունը և քառսային բնույթը դարձնելու կառավարելի:

Առաջնորդի տվյալ հայեցակարգը հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ «առաջնորդ-միջավայր», «առաջնորդ-խումբ» տարածական ընկալման ներքին հստակ կառուցվածքը, որը ասպարեզ է հանում հետաքրքրությունների առաջնայնությունը՝

ա) կոնկրետ խմբի, սոցիալական բովանդակության կամ մի քանի մարդկանց միավորող երևույթների հետաքրքրությունների ուսումնասիրումը,

բ) գոյություն ունեցող հետաքրքրությունների բավարարման միջոցների, սոցիումում եղած խնդիրների լուծման եղանակների առաջարկումը,

գ) շահերի (ընդհանուր, երբեմն էլ՝ կոնկրետ խմբի) բավարարման գործնական, ստեղծագործական կարողությունը՝ սոցիալական կոնկրետ խնդիրներ լուծելիս:

Հենց այս երրորդ ասպեկտն է որոշում և արդարացնում խարիզմատիկ առաջնորդի առկայությունը և դիրքորոշումը և, հետևաբար, անրապնդում նրա լեգիտիմությունը: «Ո՞վ է այդ արժեքակիր և խարիզմատիկ առաջնորդը» հարցին պատասխանելիս Մենեգետտին ասում է. «*Երևույթների խոր բնույթը անընդհատ ստեղծում է վերացական պոտենցիալներ, որոնք ի վիճակի են առատության մեջ բավարարել իրենց և ծառայել հումանիտար էկոհամակարգերի վերականգնմանը: Իրականում առաջնորդները բնական հակամարմիններ են, որոնք պատմականորեն ապահովում են համընդհանուր կենսական արժեքների հավասարակշռությունը*»²⁴: Առաջնորդները, բազմապատկելով և զարգացնելով ընդհանուր բարիքը, իրենցից ներկայացնում են «բնական հակաթույն», որը պաշտպանում է կոլեկտիվ բարեկեցությունը: Ցանկացած ճգնաժամային իրավիճակում բավական է թույլ տալ նրան ազատորեն ցուցաբերելու բանական նախաձեռնություն, և ամենը կստանա իր լուծումը: Բացի ի ծնե տաղանդից, նման առաջնորդը օժտված է էթիկական զգացմունքայնությամբ: Նրա համար ակնհայտ է առաջնայնության և պարտավորվածության կապը: Իրավունքը միայն դրա հետևանքն է: Ի տարբերություն սովորական մարդու, ով ձեռք է գցում իրեն հայտնի ցանկացած միջոցի, որը ինքը կարող է օգտագործել մեկ ուրիշին նվաստացնելու համար, առաջնորդը բարի է բնությունից՝ իշխանության այն տրամաբանության շնորհիվ, որով ինքն օժտված է: Նա գիտակցում է, որ «*իշխանությունը չունի պատմական նշանակություն, եթե այն մյուսների համար ինքնադրսևորման հնարավորություն չի ընձեռնում*»²⁵: Նա գիտակցում է նաև, որ «*մարդիկ կարող են վախենալ իշխա-*

²³ Венгеров А. Б., նշվ. աշխ., էջ 63:

²⁴ Менегетти А., նշվ. աշխ., էջ 40:

²⁵ Նույն տեղում, էջ 42:

նությունից, սակայն նրանք չպետք է տառապեն դրա պատճառով»²⁶: Նա հասկանում է նաև, որ ինքը ստիպված է լինել և՛ խորամանկ, և՛ ուժեղ, օգտագործել մտրակի ու բլիթի գործոնը (Ն. Մաքիավելի), սակայն երբեք, ոչ մի պարագայում չհեռանալ բանականությունից և իր յուրաքանչյուր արարքի միակ թելադրող ընդունել գիտակցականը: Առաջնորդը գիտակցում է կյանքի դիալեկտիկան, անկայունության սիներգետիկան, նա հասկանում է, որ ցանկացած հաջողակ ձևավորման շարժիչ ուժը պարտականությունների կատարումն է: Այն պարտականությունների, որոնք մարդուն վերագրվում են կյանքի տրամաբանությամբ: Խարիզմատիկ արժեքակիր առաջնորդը արարում է ինքն իրեն հետևողականորեն և պատասխանատվությամբ և ի վիճակի է լինում գիտակցելու, որ «սուբյեկտը տիեզերքի (համակարգի) ինքնակազմակերպման որակական որոշակիացված միջոց է»²⁷:

Ընդհանրապես, եթե հասարակությունը չի աջակցում առաջնորդների զարգացմանը, ուժեղանում է միջակությունների իշխանությունը: Առաջնորդների մեջ զարգացնելով համընդգրկուն պատասխանատվության զգացումը՝ հասարակությունն իր համար երաշխավորում է ամենալավ հասարակական առողջությունը, բարեկեցությունը և իրական ժողովրդավարության ձևավորումը, ինչը առաջ է բերում և իշխանությունը շնորհում նրան, ով արժանի է: Սակայն արժեքակիր խարիզմատիկ առաջնորդները միշտ պետք է գիտակցեն, որ ամեն պահի կա դեմոկրատ առաջնորդից դիկտատորի վերածման վտանգ, որը կործանարար է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ իր և իր առաջ քաշած արժեքային համակարգի համար:

Եթե պետության ղեկավարի իրականացրած միջոցառումները հաջողությամբ լուծում են հասարակության առջև ծառայած խնդիրները, և երկրի զարգացումը գնում է ճիշտ ուղով, ապա պետության ղեկավարը բնակչության պատկերացումներում օժտվում է խարիզմի հատկանիշներով²⁸: Համաշխարհային պատմության մեջ շատ են նման օրինակները²⁹:

Երբեմն խարիզմի տարրերը կապված են լինում ոչ այնքան առաջնորդի կերպարի հետ, որքան լեգիտիմատների բանականության: Այնուամենայնիվ, պետական իշխանության լեգիտիմության հիմնական գաղափարակիր Վեբերը գտնում էր, որ բյուրոկրատացման և ռացիոնալացման աճը սպառնում է մարդու ազատությանը: Նա այդ գործընթացին միակ քաղաքական այլընտրանք է տեսնում խարիզմատիկ «առաջնորդական դեմոկրատիան», այսինքն՝ խարիզմատիկ առաջնորդին, ով հասարակության զարգացմանը կտա այլ ուղղություն³⁰:

²⁶ Абдулатипов Р. Г. Философ и правитель. Диалог о правлении. СПб., 2004, с. 44.

²⁷ Аршинов В. И. Синергетика времени // Синергетика времени. М., 2007, с. 16.

²⁸ Տե՛ս Կիրկին В. Е. Современное государство. М., 2001, էջ 92:

²⁹ Այդպես էր Մեծ Բրիտանիայում վարչապետ Ս. Թետչերի օրինակը: Հենց նրա անձնական հեղինակության և վարկի շնորհիվ, հատկապես կանանց շրջանում, կոնսերվատորների կուսակցությունը շատ տարիներ հաղթում էր ընտրություններում՝ պահպանելով իր հեղինակությունը նույնիսկ Թետչերի պաշտոնից հեռանալուց հետո: Կան նաև այլ օրինակներ: Խարիզմատիկ իշխանության տարրերով օժտված էին նաև Ֆ. Ռուզվելտը՝ ԱՄՆ-ում, Ն. Գանդիին՝ Հնդկաստանում և այլն: Նրանց իշխանությունը նախ և առաջ հենվում էր ռացիոնալ հիմքերի վրա:

³⁰ Տե՛ս Скирбекк Г. и Гилье Н., ցվ. աշխ., էջ 676:

Այսօր անցումային փուլում գտնվող անկայուն հասարակական համակարգերը, այդ թվում՝ հայաստանյան հասարակությունը, ամբողջատիրական համակարգից անցում կատարելով ազատական համակարգի, դեռևս չեն կարողանում լիովին ընդունել այդ հասարակական համակարգի չափորոշիչներն ու առաջնորդվել դրանցով և, հետևաբար, դեռևս գտնվում են անհավասարակշռության, անկայունության և անցումայնության շրջանում:

Դ. Պետական իշխանության լեգիտիմացումը Հայաստանում:

Անդրադառնալով ժամանակակից հայկական հասարակության անցումային շրջանում գտնվելու հետևանքներին և առանձնահատկություններին՝ պետք է ասել, որ գրեթե ամբողջությամբ փոխվել է հասարակության արժեքային համակարգը: Խորհրդային Միության հոգեբանական հետքը կրող ՀՀ քաղաքացիները դժվարությամբ են կարողանում ընկալել այսօրվա արևմտյան արժեքները, նաև վերջերս տարածում գտած արևելա-ամերիկյան և հայկական արժեքների խառնված և խեղաթյուրված տարբերակները:

Վերն արդեն անդրադարձել ենք անցումային շրջանում հասարակության մեջ տեղի ունեցող երևույթներին, որոնք ընդհանուր են բոլոր հասարակությունների համար: Հայաստանի օրինակում նույնպես դրանք առկա են: Հասարակությունում տիրում է ապակողմնորոշվածության մթնոլորտ: Մարդիկ չունեն արժեքային կողմնորոշման հստակ չափորոշիչներ: Սոցիալ-տնտեսական ահռելի խնդիրներ ունեցող հասարակությունում աճում է նյութապաշտ սերունդ: Նյութապաշտությունն անգամ ծնողների կողմից երեխաներին դաստիարակելու միջոց է դառնում: Նման հոգեբանական պատկերացումներ ունեն հիմնականում երկրի մեծահարուստներն ու աղքատները: Հասարակության չնչին մաս կազմող միջին խավը հազիվ է կարողանում մարտնչել գաղափարական արժեքների պահպանման համար:

Հայտնի է, որ մարդն իր գործունեությունը ծավալում է՝ հենվելով որոշակի սկզբունքների և արժեքների վրա: Հայաստանյան հասարակության քաղաքացիների մի զգալի հատված թեև հասկանում է բանական արժեքների կարևորությունը, սակայն կենցաղային խնդիրները թույլ չեն տալիս ուշադրությունը շեղելու մանր կենցաղապաշտական և նյութապաշտական կամ սենտիմենտալ-իմաստասիրական արժեքներից: Այն, որ հայ իրականությունում պետական իշխանության ավանդական լեգիտիմության մասին խոսք անգամ լինել չի կարող, ակնհայտ է: Դրա համար չկա ոչ միայն համապատասխան սովորության հիմք, այլև լի են դրան հակասող սովորությունները, որոնք հետևանք են բավականին երկար ժամանակ օտար իշխանությունների ենթակայության տակ գտնվելու: Իսկ ինչ վերաբերում է լեգիտիմացման մյուս ձևերին, ապա պետք է դիտարկենք այն, թե մեր կողմից վերը նշված խնդիրների առկայության պայմաններում, որ ձևը ավելի արդյունավետ կլինի պետական իշխանության լեգիտիմացման համար:

Պետք է ասել, որ քաղաքացիական հասարակության կայացման սկզբնական փուլում գտնվելը, հայ մարդու պատմահոգեբանական առանձնահատկությունները և հասարակության անցումային շրջանում գտնվելը էական խնդիրներ են: Քաղաքացիական հասարակության չկա-

յացածության հանգամանքը չի նպաստում ռացիոնալ-իրավական մեթոդների կիրառմամբ պետական իշխանության լեգիտիմացմանը: Որպեսզի հաղթահարվի հայ մարդու հոգեբանական առանձնահատկությունը՝ փորձով ապացուցված անվստահելի վերաբերմունքը իշխանությանը, հայրենական իշխանությունը պետք է նվաճի բնակչության վստահությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ են պետական իշխանության անթերի աշխատանք, դրական արդյունքներ, որը տևական ժամանակ է պահանջում: Սակայն գտնում ենք, որ կա հնարավոր մեկ այլ տարբերակ ևս, որը կարող է իրականացվել նաև ոչ տևական ժամանակում: Դա կապված է մեծ ինտելեկտով, ուժեղ խարիզմով օժտված անձի՝ առաջնորդի ի հայտ գալու հետ: Միայն ժողովրդի հավատն ու վստահությունը վայելող դեմոկրատ-առաջնորդը կարող է հաստատել ժամանակակից հասարակությունում արժեքների այնպիսի համակարգ, որը համապատասխանում է ժողովրդավարության սկզբունքներին, մարդու հիմնական իրավունքներին, օրենքի գերիշխանությանը և սոցիալ-իրավական պետության մյուս սկզբունքներին: Եվ միայն հետևելով նման անձի, ով ժողովրդի աչքում նույնանում է իրեն «դժվար և բարդ» կյանքից ազատող և ոչ սովորական, հանճարի հատկանիշներով օժտված առաջնորդի հետ, ժողովուրդը կարող է համեմատաբար կարճ ժամանակում վերականգնել իր վստահությունը պետական իշխանության նկատմամբ և այդ իշխանությունը համարել լեգիտիմ, այլապես, ինչպես ասում էր Կոնֆուցիոսը. «Ողբերգություն է սպասվում այն պետությանը, որը չունի իր ժողովրդի հավատն ու վստահությունը»: Ժողովուրդը ինչքան հեռու է լինում իշխանությունից, այնքան այն համարում է օտար, խորթ և ավելի քիչ է վստահում դրան, եթե, իհարկե, ընդհանրապես վստահում է: Անցումային շրջանի խնդիրները նույնպես պետք է լուծել ռացիոնալ-արժեքակիր խարիզմատիկ առաջնորդի միջոցով, ով կարող է իրականացնել «արժեքների վերարժևորում», ստանձնել իրական արժեքները հասարակությանը նոր ձևով մատուցելու պատասխանատու առաքելությունը և հասարակության մեջ հաստատել այդ արժեքային համակարգը, ինչը իշխանության լեգիտիմացման համար ունի ամենակարևոր նշանակությունը:

Ամփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ հասարակությունների զարգացման նման տեմպերի պայմաններում, առաջադիմականության խորհրդանիշ է հանդիսանում ռացիոնալությունը՝ որպես տեղեկատվական հասարակության արագացող գործընթացների իմաստավորման միջոց: Մեր խնդրի տեսանկյունից նույնպես պետական իշխանության ռացիոնալ-իրավական լեգիտիմացումը պայմանավորված է հասարակության զարգացվածության մակարդակով: Այդ զարգացածության մակարդակ կարելի է համարել քաղաքացիական հասարակության, սոցիալ-իրավական պետության առկայությունը: Ելնելով լեգիտիմացման ձևերի դասակարգման այս տեսանկյունից՝ նշենք, որ ավանդական լեգիտիմացումը հատուկ է զարգացման թերի մակարդակ ունեցող հասարակություններին, որոնք դեռևս առաջնորդվում են հասարակությունում առկա սովորույթներով և դրա հիման վրա ընդունում պետական իշխանությունը: Հայ իրականությունում լեգիտիմացման այս ձևը անիրականա՞նալի

է՝ հաշվի առնելով պետական իշխանության հետ կապված մնացած սովորույթների բացակայությունը և պետական իշխանությունը բացառող սովորույթների առկայությունը:

Իռացիոնալ լեգիտիմացում համարվող խարիզմատիկ լեգիտիմացման առաջին ձևը՝ աֆֆեկտիվ խարիզմատիկ լեգիտիմացումը, կապված է իռացիոնալության հետ, որը տոտալիտար երկրներում դրսևորվում է բռնապետական իշխանության տեսքով: Հայ իրականությունում այս ձևը նույնպես բացառվում է, քանի որ, թեև հասարակությունը չի գտնվում զարգացման բարձր մակարդակում, բայց նայնպես այնքան ցածր չէ, որ դրա անդամները գործունեության հիմքում շեշտը դնեն էմոցիոնալ-զգայական ազդակների վրա:

Ի վերջո կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստանում պետական իշխանության լեգիտիմացումը կարող է իրականանալ ռացիոնալ-իրավական և խարիզմատիկ լեգիտիմացումների որոշակի հատկանիշներն ամփոփող միջանկյալ տեսակի միջոցով, որը խարիզմատիկ լեգիտիմացման մյուս ձևն է՝ ռացիոնալ-արժեքային լեգիտիմացումը:

TARON SIMONYAN – *Легитимация государственной власти в условиях неустойчивой и переходной государственности (синергетический подход)*. – Одной из главных особенностей переходных обществ является неустойчивость всей государственной системы, её чувствительность к любому колебанию социально-психологической, социально-правовой и социально-ценностной систем. До сих пор не решён вопрос о легитимности государственной власти – одого из основных инструментов, приближающих власть к изменяющемуся социуму и способных привести хаотическую динамику системы к желательному развитию.

В статье синергетическим методом проанализированы типы легитимации с целью найти тот, который мог бы использовать потенциал хаоса. Предложено сочетание двух типов – ценностно-рационального и харизматического, названное ценностно-харизматической легитимацией. Этот тип эффективен для легитимации власти, поскольку в нём соединяется рациональный выбор способа управлять государством с верой народа в государственность. Кроме того, он иногда позволяет компенсировать отсутствие порядка сильным лидерством.

Предложенная концепция рассмотрена с точки зрения армянской действительности, при этом анализируются её социально-психологические, государственно-правовые и культурные структуры, а также возможность использовать у нас ценностно-харизматическую легитимацию.

TARON SIMONYAN – *The Legitimation of State Authority in Unstable and Transitional Statehoods (synergetic approach)*. – One of the main features of transitional societies is the instability of the whole system and its structures, as well as the sensitivity to any small fluctuations in socio-psychological, socio-legal, socio-state and socio-value systems.

In this realm a very important and for many societies and states as an unsolved problem continues to be the issue of the legitimacy of state authority. The latter is

one of the main tools, which is able “to connect” the state power to the society undergoing processes of accelerating changes, and bring the complex and chaotic dynamics of the system to the desirable attractor of development.

Having analyzed the types of legitimation by the synergetic methodology or the science of complex systems proposed by different authors, and comparing the concepts to each other, in order to find out the most proper type that has a capability in itself for using the fruitful potential of chaos (or complex systems being in accelerating dynamics), the author proposes a mix of two types of legitimation – the rational-value type and charismatic type. The latter has been called a value-charismatic legitimation. This can be effectively used for legitimation of state authority, as this type has a rational-value based background for choosing the rational ways of statecraft and state development, as well as a charismatic tool, which can improve the confidence of the nation and society in state authority and statehood, while the absence of the order can be compensated sometimes only by the strong leadership.

The proposed concept has also been discussed through the prism of Armenian reality, having the aim to indicate the general features of Armenian socio-psychological, state-legal, cultural structures that experience interesting, complex and sometimes unforeseen developments, as well as the possibility of implementation the value-charismatic legitimation of state authority in Armenian realm.